

# ԴՐԱԵՒՈՐԵԼ ՊԵՏԱԿԱՆ, ԲԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

*Posted on December 26, 2012 by Keghart*



Category: [Opinions](#)





## ԱՐՄԵՆՊՐԵՍ, Երևան, 26 Դեկտեմբեր 2012

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է Արևմտահայոց ազգային համագումար միջազգային հասարակական կազմակերպության փոխնախագահներ Նորատ Տեր-Գրիգորյանցին և Կարեն Միքայելյանին:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ Նախագահի մամուլի գրասենյակից, կարևորելով համաշխարհային հայության հատվածների միջև կապերի և փոխգործակցության խորացումը, համազգային նպատակների և ծրագրերի իրականացման գործում նրանց միջև աշխատանքների և դերերի բաշխումը՝ Նորատ Տեր-Գրիգորյանցը և Կարեն Միքայելյանը Նախագահին տեղեկացրել են կազմակերպության ծրագրերի մասին, որոնք առնչվում են արևմտահայերի՝ Օսմանյան կայսրության նախկին հայ քաղաքացիների ժառանգների շահերի և իրավունքների պաշտպանման գործընթացին:



## ԱՐՄԵՆՊՐԵՍ, Երևան, 26 Դեկտեմբեր 2012

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է Արևմտահայոց ազգային համագումար միջազգային հասարակական կազմակերպության փոխնախագահներ Նորատ Տեր-Գրիգորյանցին և Կարեն Միքայելյանին:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ Նախագահի մամուլի գրասենյակից, կարևորելով համաշխարհային հայության հատվածների միջև կապերի և փոխգործակցության խորացումը, համազգային նպատակների և ծրագրերի իրականացման գործում նրանց միջև աշխատանքների և դերերի բաշխումը՝ Նորատ Տեր-Գրիգորյանցը և Կարեն Միքայելյանը Նախագահին տեղեկացրել են կազմակերպության ծրագրերի մասին, որոնք առնչվում են արևմտահայերի՝ Օսմանյան կայսրության նախկին հայ քաղաքացիների ժառանգների շահերի և իրավունքների պաշտպանման գործընթացին:

Սերժ Սարգսյանը նշել է, որ անհրաժեշտ է օգտվել պատմության դասերից, դրսևորել իրատես և պատասխանատու ժամանակակից ազգային, պետական, քաղաքական մտածողություն չայլական հարցի հետապնդման գործընթացի փուլում:

Արևմտահայոց ազգային համագումարը գրանցված է Փարիզում Ֆրանսիայի 1901 թվականի օրենսդրության համաձայն և անդամագրված է ՄԱԿ-ի տնտեսական և

սոցիալական խորհրդում իբրև ոչ կառավարական կազմակերպություն:

